

արքան, որ առաջ թագաւորից մեծամեծ նպաստներ էր ստացել իւր վանքի շինութեան համար, թագաւորի որդեկանցից մէկին միտնեց, որ ապա հռովմէացոյց մօտ վախաւ. Խոսրովն այդ կրօնաւորին ծանր պատժի չենթարկեց, այլ երկու տարի շարունակ մինչև իր մահը (12- օգոստ. 575), թեթեւ արգելանքի տակ պահեց, այնպէս որ նա կարող էր մինչև անգամ իր աշակերտների հետ յարաբերութիւն ունենալ, և Քրիստոնեաների համակրութիւնն անգամ նրա միւս անհնազանդ որդուն, ապստամբ արքայազն Անուշապատի համար, ոչ մի հալածանք չը յարոյց նրանց դէմ: Սակայն Խոսրովը մի թոյլ և մեղկ իշխան չէր, այլ եռանդուն, երբեմն և խիստ, մինչև իսկ անազորոյն և պատերազմասէր: 2

Խոսրովի գահակալութիւնից յետոյ սկսուած բանադնացութիւնները վերջացան մի տարուանից յետոյ մի «յաւիտենական խաղաղութեամբ» (սեպտ. 532), և Լուովմայեցիք համաձայնեցան տարեկան մի մեծ գումար վճարելու և այլ զիջումներ էլ արին, իսկ պարսիկները վերագրաձրին Լադիստանի (սե. ծովի արևելեան ծայրում, հին Վողքիսում) մի քանի բերդերը: Կնչպէս երևում է, պարսից թագաւորն էլ շատ էր խաղաղութիւն ցանկանում: Հաւանօրէն այդ խաղաղութիւնը նա գործ դրաւ անմիջապէս իւր տէրութեան սահմաններն ապահովելու ընդդէմ զանազան բարբարոսների: Աւանդութիւնն արդար կերպով նրան վերագրում է մեծամեծ ճիգեր Վովկասեան և հիւսիս արևելեան սահմանների ապահովութեան համար: 3, սրան են վերաբերում նոյնպէս և մի քանի ըմբոստ ցեղերի բռնի գաղթեցնելը, Մի քանի տարուանից յետոյ նա կրկին իրեն այնքան զօրաւոր զգաց, որ կարող էր հռոմեաների դէմ պատերազմել, Թերևս իսկապէս վախենում էր նա այդ միջոցներին Յուստինիանոսի Ափրիկէում և Իտալիայում տարած յաղթութիւններից և կամենում էր խանգարել բիւզանդական կայսրութեան չափազանց զօրանալուն: Գոթերի թագաւոր Ալտիգէսի դեսպաններն երեւի

պարսից թագաւորին հասկացրած կը լինին դրանցից պարսից տէրութեան համար յառաջացող վտանգները: Առաւել ևս զրգռած կը լինի նրան այն համաձայնեցող, որ բիւզանդեան Հայաստանի նախարարները, որոնք բազմադիմի անիրաւութիւնների պատճառով ապստամբել էին, իրեն օգնութեանը դիմեցին, թէպէտ և իրենք էլ քրիստոնեայ էին, Գաշնադրութեան պայմանների մանր խախտումներ թող էին տուել թէ հռոմեաները և թէ պարսիկները, զրա մասին արդէն իսկ հոգացել էին երկու տէրութեան սահմաններում բնակուող արարները: Յամենայն դէպս Խոսրովը այս անգամ պատերազմ էր կամենում: Այս պատճառաւ էլ 540 թուին գուրս եկաւ նա վաղաժամ, որպէս զի Հապուհ Ա. -ի պէս Ասորիքի վերայ յարձակուի:

(Նը Շարունակով)

Ն. քարամանց



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳԱՆԱԿՈՒԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՒՐԻՇ ՄԱՐԿԱԿԱՆ ՊԼՏԻՏԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ, ԿԱՐԳԱՊԸՀՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Պատմական տեսութիւն Մ. Ա. -ի:

Մի քանի զիմաստօններ վերջին ժամանակներս սկսել են միջնորդել, որ վերացուն մարմնական պատիժները զրազէտ գիւղացիների վերաբերութեամբ, Այդ միջնորդութեան շարժառիթներն այն աստիճանի ազնիւ են, որ անկարելի է լին համակրութեամբ չը վերաբերուել զօրան և չը ցանկալ յաջողութիւն: Պարբերական մամուլն արդէն խօսեց և շարունակում է խօսել այդ միջնորդութեան վերաբերութեամբ ամենանպաստաւոր մտքով և ամէն մի ճշմարիտ լուսաւորուած մարդ կողմունէ մեր հասարակութեան մէջ մի այդպիսի մարդասիրական ըզրաբան յայտնուելուն: Իսկ և թէ՛ ձայների այդ հագցման յայտնուելուն, իսկ և թէ՛ պատահում են տիտուր բացառութիւններ և լուրում ձայներ ի պաշտպանութիւն զանակոծութեան, որ դեռ շատերը պատրաստ են «մարդկային աւեր խղճմտանքի վերականգնման միակ միջոցը» համարել, պարզ է՝ որ այդ առաջ է գալիս այն բանից, որ մեզանում դեռևս ամէնքը չեն եկել այն եզրակացութեան, թէ մարմնական պատիժները չունին ոչ մի աւելցութիւն մարդկային արժանաւորութիւնը բարձրացնելու ձգտման հետ: և դեռ ամենքը չեն համոզուած, որ ժամանակ է թողնել յուղղութիւն բերելու կոպիտ միջոցները:

1. Անուղէմէջի ասորական (չը տպագրուած) կենսագրութեան համաձայն, որ հաղորդել է ինձ աշակերտներիցս մէկը: Կենսագիրը, որ ստիպուած է ակամայ այստեղ մի շին արեւելեան միապետի թողորովին անօրինակ մեղմութեանը վկայելու, թագաւորին սատարալական բռնակալ ներկայացնելու զգոյման յաջորդ է տալիս այնու, որ մի չափազանց անշնորհ հրաշքի միջոցով մի արգելքի մասին է պատմում, որ թոյլ չէ տուել արքայի դէմ նիւթուած սպանման նախագիծն իրագործուել:

2. Յոյն մատենագիծների աննպաստ վկայութիւնները, ինչպէս օրինակ Պրոկոպիոսինը, յառաջանում են այն տեղից, որ Խոսրով այնքան յաժախ զգալի կծրակի վնասել է հռովմայեցոց նւ նուստտաբնէ:

3. Տես Սեբէոս, Գիբը Գ. գլ. Բ.

Ժ. Թ.

որոնք Միջին դարերի բարբարոսութեանն են վայել, Պարզել՝ թէ ո՞րքան անհամապատասխան են մարմնական պատիժները մարդկային արժանաւորութեանը, ցոյց տալ թէկուզ մի մասը այն չարիքի՝ որ գանակոծութիւնը պատճառել է մարդկութեանը նորա ամբողջ պատմութեան ընթացքում, ահա մեր տեսութեան նպատակը, Բայց որովհետեւ մի կողմից՝ գանակոծութիւնը տիրող աղքեցութիւն ունէր գլխաւորապէս դպրոցներում, իսկ միւս կողմից՝ հետեւել գանակոծութեան պատմութեանը մարդկութեան կեանքի այն բոլոր շրջաններում, ուր նա որ և է դեր է խաղացել, շատ դժուար է, թէ չասենք անկարելի, ուստի մենք կը սահմանափակենք մեր հարցը և բացառապէս դպրոցական կարգապահութեան մէջ գործադրուած գանակոծութեան պատմութիւնը կանենք, աւելի կարեւոր համարելով այս վերջինս:

Գանակոծութիւնն, իբրեւ մանկավարժական պատժական միջոց, գոյութիւն ունի տւելի քան երկու հազար տարի, նա մեծ յարգ ունէր հին հնդկներէ մէջ, ուր ընդհանրապէս մարմնական պատիժները որոշ գործադրութիւն ունէին, եւ այդ զարմանալի չէ, եթէ ի նկատի առնենք, որ հնդկների մէջ գործադրուում էին այնպիսի բարբարոսական պատիժներ, որպիսի է յանցաւոր աշակերտի վերայ սառը ջուր լցնելը. համեմատած դորա հետ՝ գանակոծութիւնը դեռ շատ թեթեւ պատիժ էր: Դպրոցական կարգապահութիւնը խիստ էր նոյնպէս երբայցեցող մէջ, որոնք Աստուծոյ երկիւղն էին համարում զաստիարակութեան հիմնական սկզբունք, ինչպէս այդ կարելի է տեսնել Աստուածաշնչի շատ տեղերում: Որովհետեւ երբայական մանկավարժութիւնը սկզբունքի տեսակետով իրաւացի էր համարում ծեծը, ուստի գանակոծութիւնը կամ «գաւազանը» մեծ դեր էր խաղում նոցա զաստիարակութեան մէջ, Սողոմոնի առաքններում կարգում ենք. «Որ ինչպէ ի գաւազան, ատեայ զորդի իւր, իսկ որ սիրէ՝ խնամով խրատէ» (ԶԳ. 25), «Խրատեա՛ զորդի քո՝ զի այնպէս եղիցի քեզ յոյս բարի, եւ ի թշնամանըս նորա մի հպարտանար անձամբ քով» (ԾԹ. 18), Աւելի աղգու է հետեւեալը. — «Մի խնայեր խրատել զտղայ, Զի եթէ հարկանես զնա գաւազանաւ՝ ո՛չ մեռանի, Քանզի դու հարկանես զնա գաւազանաւ, բայց զանձն նորա փրկես ի մահուանէ» (ԻԳ. 13—14), Պարելի է ենթադրել, որ երբայցեցող գործնական մանկավարժութեան մէջ այդ բոլոր կանոններն անթերի գործադրուում էին, եթէ ի նկատի ունենանք մի կողմից՝ նոցա մանկավարժութեան հիմնական հայեցակէտը, իսկ միւս կողմից այն, որ ներկայումս էլ հրէից մեղամեղներն (ուսուցիչ) աշակերտներին

յուզղութիւն բերելու համար ընդարձակ կերպով օգտուում են գանակոծութեամբ:

Նոյն իսկ Յունաստանում, որ հռչակուած էր իւր մարդասիրական քաղաքակրթութեամբ դո՛նէ ուսումնարանների գոյութեան առաջին տարիներում, թագաւորում էր նոյն գանակոծութիւնը, Արիստոֆանէսը, ողբալով իւր ժամանակի բարուց ապականութիւնն՝ այսպիսի գծերով է յիշատակում հին դպրոցներում տիրող գեղեցիկ կարգերը, «Նսկը պատմեմ» թէ որպիսի էր զաստիարակութիւնն այն բաղաւոր ժամանակներում, երբ ես սովորում էի և երբ չափաւորութիւնը կանոն էր, Այն ժամանակ, չը նայելով անձրեւին կամ ձեանը, մանուկները գլխարաց և բորիկ էին փողոց դուրս գալիս, և միասին, ամենախիստ կարգով գնում էին երաժշտական դպրոց, Այնտեղ նոքա հանդարտութեամբ տեղաւորուում էին, և նոցա թոյլ չէր տրուում ծալապատիկ նստել, Սկսում էին սովորեցնել նոցա որ և է գեղեցիկ երգ, Ուսուցիչը ծանր և վսեմ կերպով երգում էր նոցա առաջ մի երգ, եթէ մէկնումէկին նկատում էին, որ ուզում է կեղծել, խիստ կերպով ծեծում էին» («Ամպեր»): Այդ բնաւորագրութիւնը վերաբերում է աթենական դպրոցներին՝ նոցա գոյութեան նախնական շրջանում: Աւերելում կարգապահութեան խստութիւնը մեղմացաւ, և Պլատոնն, օրինակ, միայն այն դէպքումն է թոյլ տալիս ծեծել, երբ մեծին չէին յարգում, կամ խախտում էին դաստիարակչական որեւէ նշանաւոր օրէնք, Ինչ վերաբերում է սպարտական դպրոցներին, գանակոծութիւնըն այնտեղ շարունակում էր թագաւորել, քանի որ պահպանուում էր Սպարտայում այն պատերազմական ոգին, որ ի վաղուց հետէ յայտնի էր դարձել, Սպարտացու ամենացանկալի արժանաւորութիւններն էին ֆիզիքական ամրութիւնն ու զինուորական քաջասրտութիւնը, Ֆիզիքական դիմացկունութիւնը զարգացնելու համար ամէն միջոց գործ էր գրուում, և ի հարկէ սպարտական զաստիարակները չէին կարող մոռացութեան տալ գանակոծութիւնը, Սպարտական դպրոցներում ծեծը գործադրուում էր ոչ միայն իբրեւ յանցանքի պատիժ, այլ և իբրեւ միջոց սպարտացի երիտասարդների մարմնն ամրապնդելու, Իւրաքանչիւր սպարտական պեղծօմ—զաստիարակ՝ ունէր մի քանի պաշտօնական անձինք, որոնք կարգապահի պաշտօն էին կատարում և կոչւում էին մաստիգօֆօրներ—գանակոծներ, Որպէսզի մանուկներին ընտելացնեն ցաւի համբերելուն, ամէն մի յարմար դէպքում ենթարկում էին նոցա մտրակի հարուածներին, Այսպէս, օրինակ, ամէն տարի, Արտեմիսի Որփէյան տօնին՝ արիւն հանելու չափ գանակոծում էին պատանիներին, Այդ բա-

նին ներկայ էին լինում ծնողները և յորդորում էին իրանց որդոց լինել հաստատուն և արի.— և վերջիններս ուրախ ու զուարթ, առանց ցաւի աղաղակի, դիմանում էին հարուածներին, ճշմարիտ է, մի քանիսը մեռնում էին մաստիգօֆօրների հարուածների ներքոյ, բայց անմեռնէ, Իւրաքանչիւր այր մարդ կամ ծերունի ոչ միայն իրաւունք ունէր, այլ և պարտաւոր էր նկատել պատանուն յանցանքը և տեղնուտեղը պատժել զաւագանով, Իւրաքանչիւր մանուկ կամ պատանի ամէն րոպէ կարող էր ենթարկուել կամ պեղծօմի պատժին, որ իւր մասիգօֆօրների հետ շրջում էր փողոցներն ու երիտասարդների շրջանները, և կամ նորա (պեղծօմի) օգնականներին, Բացի այդ, տասն օրը մի անգամ էֆօրները զըննում էին երիտասարդութիւնը, ստուգելով թէ արգելօք նոցա հագուստը, ննջարանը և այլ տեղերը համաձայն են օրէնքի պատուէրներին, կամ թէ մանուկների տեսքն ու հասակը համապատասխան են նոցա պարտուպատշաճ զարդացմանը, և արգելօք կարիք չը կայ գանակոծութեան ենթարկելու նորան, ով այնքան է գիրացել, որ դուրս է եկել մանկավարժական չափ ու ձևի և վայելչականութեան սահմանից, Մանուկի իւրաքանչիւր յանցանքին, իւրաքանչիւր անկարգութեանը հետևում էին զաւագանի կամ մորակի հարուածներ, որովհետև սպարացիք կարծում էին՝ թէ ամենախիստ կարգապահութիւնն ստեղծում է արիասիրտ քաղաքացիներ, և

էին Հռովմում, նայելով ուսուցչի անձնաւորութեանը, կարգապահութիւնը կամ շատ խիստ էր լինում, կամ սակաւ, բայց ընդհանրապէս համապատասխան հռովմայեցու լուրջ և պատերազմասէր բնաւորութեանը, Օգոստոսի ժամանակներում յուղութիւն բերելու համար զաւագանի հարուածներ էին տալիս ձեռքերին կամ մատներին, իսկ աւելի ծանր յանցանքի ժամանակ—մորակի հարուածներ, որ սովորաբար միայն ստուկներին համար էր նշանակուած, Հռովմայեցոց դպրոցներում գանակոծութեան գոյութեան մասին մենք տեղեկանում ենք, ի միջի այլոց, Կուլինտիլիանի բողոքից, Լինելլո առ հասարակ գիտսիրտ մանկավարժ, նա եռանդուն կերպով գիմադրում էր երկիւղը իրրե աշակերտին յուղութիւն բերող միջոց ընդունելուն, «Երկիւղը»—ասում է նա իւր «Վանոնք ճարտասանութեան» մէջ, —սանձահարում է մի քանիսին, բայց միւսներին ստորացնում, . . . Իմ կողմից՝ ևս նախագասում եմ այն աշակերտին, որն զգայում է դէպի գովեստը, որ որդւորում է յաջողութեամբ, և որ անյաջողութեան դէպքում արտասուում է, Ելդ հիմամբ Կուլինտիլիանն առաջարկում է բարոյապէս ազգել աշակերտի վերայ և բացարձակ կերպով գանակոծու-

թեան գործադրութեան դէմ է խօսում չընայելով որ, ասում է նա՝ «սովորութիւնը խրախուսում է, իսկ Քրիզիպպոսը չէ արգելում գանակոծութիւնը» Կուլինտիլիանի կարծիքով՝ երեսաներին ծեծելը չէ նշանակում ուղղել նոցա դէպի բարին ու ճշմարիտը, այլ—միայն զերծ պահել կանոնները խախտելուց, Բայց եթէ հարուածները կարողանան իսկ ազգել երեսաներին, անպէտք են նոքա երիտասարդութեան համար, որոնց երկիւղն այլևս չէ ազդում, Յամենայն դէպս ծեծելը նոյն բանն է, ինչ որ—ճընշել հոգոյ մէջ ամօթի զգացմունքը և առաջ բերել երկչոտութիւն, Աւստի յանգիմանութիւնն այլևս չէ կարողանում բերել յուղութիւն, մարմնական պատիժը, կարող է աւելի ևս վատացնել նորան և դարձնել ստրուկ:

Միջին դարերումս սքոլաստիքայի տիրապետութեան ժամանակ, դպրոցական կարգապահութիւնն ասկետական—կրօնական հայեացքների ազդեցութեան ներքոյ՝ ունէր մի որոշակի խիստ բնաւորութիւն, Ելդ ժամանակ կասկածանքով էին վերաբերում մարդկային ապականուած բնութեանը և նորան յուղութիւն բերելու համար ոչ մի միջոց չէին խնայում, 1363 թուին սքոլաստիկական դպրոցներից մէկում նոյն իսկ նստարան կամ աթոռ գործադրելն էլ էին արգելել աշակերտներին, առարկելով թէ՝ այդպիսի բարձր նստարանները կարող են զարգացնել նոցա մէջ հպարտութիւն, Եւ զարմանալի չէ, որ գանակոծութիւնը տասն և հինգերորդ դարումն էլ մօդա էր այնպէս, ինչպէս XIV և XV-րդ դարերում, «Արիշ զանազանութիւն չրկար»—նկատում է մի պատմաբան, — «բացի այն, որ XV-րդ դարում ճիպոտի երկայնութիւնն երկու անգամ աւելի էր, քան XIV-րդ դարում»:

Հոգևորականների կառավարած միջնադարեա դպրոցներում կրթական կարգապահութիւնը խիստ էր և վայրագ ու կրում էր մոայլ, վանական բնաւորութիւն, Գանակոծութիւնն ընդունուած էր ընդհանրապէս և ծառայում էր իրրե յուղութիւն բերող միջոց, Սէն—Գալլէնում հոգևորականութեան մէջ սովորութիւն կար, որ իւրաքանչիւր յանցաւորի, լինէր նա թէկուզ հասակաւոր, մերկացնում էին և կապելով սեանը՝ մորակի հարուածներ տալիս, Բօբերգ Սօրօննացին պատմում է, որ Փարիզում զաւագանը գործադրում էր իրրե յուղութիւն բերող միջոց թէ՝ աշակերտների վերաբերմամբ և թէ ստորին դպրոցների կրտսեր ուսուցիչների (parvi magistri) վերաբերմամբ, եթէ շարաթ օրերը նոցա աշակերտները վատ էին պատասխանում իրանց քննող իշխանաւորի (magnus magister) հարցերին, Ելդպիսի կարգապահութեան հետևանքներն էին աշա-

երաների տգիտութիւնը, կոպտութիւնը և անզուսպ վայրենութիւնը, Հատ անգամ աւագ և կրտսեր աշակերտների միջև այնպիսի կռիւներ էին ծագում որոնք վերջանում էին մահով կամ խեղումով, 937 թուին, երբ Սէն—Գալլէնի աշակերտները Ս. Մարկոսի տոնին արած չարութեան համար պատժի պէտք է ենթարկուէին, բարձր դատարանի աշակերտներից մէկը՝ գանակոծութեան սարսափից և ընկերներին տանջանքից ազատելու համար, հրդեհեց վանքն ու դպրոցը, Կարելի է երեւակայել թէ որպիսի էր պատիժը, եթէ նորանից աղատուելու համար աշակերտները վճռում էին դարհուրելի յանցանք գործել, Աբօլաստիքական կարգապահութեան ծայրայեղ անդժութեանցը վկայող այսպիսի փաստերից յետոյ՝ պարզ հասկանալի է դառնում այն խիստ կարծիքը, որ յայտնեց Լոթերը միջնադարեան վանական զբոսայգիների վերաբերութեամբ, «Իմ բոլոր համոզմունքներս, իմ բոլոր ցանկութիւններս ու թախանձանքներս, ասում է բողոքականութեան հիմնադիրն,—ուղղուած են առ այն, որ յաւիտեանս անդունդը գլորուէին այդ անհաշիւ զոհերը, որոնք այդ անհաշիւ դառնային նոքա ճշմարիտ քրիստոնէական դպրոցներ, Ելչպիսով՝ ողորմութեամբն Աստուծոյ, երեսմաներն արդէն կարող են մեր ժամանակներում» ուրախ խաղալով սովորել ամեն ինչ, լինի դա լեզուներ, արուեստ, պատմութիւն կամ մի այլ բան, Ելծմ արդէն մեր դպրոցները դժոխք չեն և ոչ էլ քարաւան, ուր մեզ տանջէին զանազան *causalibus*-ներով և *temporalibus*-ներով, և ուր՝ չը նայելով բոլոր տանջանքներին, գանակոծութիւններին, սարսափին ու թախմին, մենք ոչինչ չէինք սովորում, նախկին դպրոցները՝ բանտեր, դժոխքներ էին, նախկին ուսուցիչները՝ բռնակալներ, դահիճներ, որոնք անչափ և անխնայ ծեծում էին երեսմաներին, ստիպելով նոցա սովորել անտանելի դժուարութեամբ և ձեռք բերել շատ չնչին օգուտ, Այս կարծիքը կրում է Լոթերի խիստ լեզուի բնորոշ պատկերը, որի պատճառով անկարելի է չը համարել այն մի որոշ աստիճանի չափազանցացած, բայց անկասկած կատարելապէս ուղիղ է նաեւական կէտերում, Որ այդ այդպէս, դա կարելի է տեսնել միջնադարեան դպրոցներին վերաբերող մի այլ կարծիքում—Անսէլմ Կենտրեբերիացու, որի մեղմ բնաւորութիւնը բացէ ի բաց մերժում է սուր չափաչանցողութեան ամէն մի կարելիութիւն, «Գիշեր—ցերեկ» ասում է Անսէլմին մի արբան—մենք չենք դադարում պատժելու մեր հոգադրութեանը յանձնուած երեսմաներին, բայց քանի գնում է՝ նոքա աւելի վատանում են, Անսէլմը դորան պատասխանում է, «Ճշմարիտ է, դուք անդադար պատ-

ժում էք, Բայց երբ նոքա մեծանան՝ ինչ կը դառնան, Ապուշներ և յիմարներ, Գեղեցիկ դաստիարակութիւն, որ մարդկանց անասուն է դարձնում... Եթէ դուք ձեր պարտիզում մի ծառ տնկէիք և ամէն կողմից շրջափակէիք նորան այնպէս, որ նա չը կարողանար տարածել իւր ճիւղերն, ինչ կը տեսնէիք դուք, երբ մի քանի տարուց յետոյ ազատէիք նորան, իւր կապանքներից, Կռացած և ծռոնուած ճիւղերով մի ծառ, և միթէ մեզը ձերը չէր, որ դուք այնպէս անխոհեմութեամբ նեղում էիք նորան, Աբօլաստիքական դաժան պատիժների դէմ եղած այս բողոքը պարզ պատկերացնում է նոցա (պատիժների) դործադրութեան հետեւանքները, վայրագ կարգապահութիւնը՝ հանդերձ գանակոծութեամբ, սպանում, մեռցնում էր մանկական հոգու ամեն մի կենդանի արտայայտութիւն և աշակերտներին մի տեսակ ապուշներ դարձնում, Այս տխուր երեւոյթը բացատրուում է նախ ի հարկէ, ժամանակի ոգով—Միջին դարերի մօտայլ վայրերի դարաշրջանի ոգով, և ապա՝ սքոլաստիքականութեան իւր իսկ բնաւորութեամբը, որ ներկայացնում է իսկապէս մեռած, անհոգի սովիւստութիւն, Ճշմարիտ է, XIII և XIV դարերում՝ դաստիարակչութեան միջնադարի մէջ նոր և կենդանի հոսանք մտցնող համալսարանների յայտնուելովը սքոլաստիքական դպրոցների անգուժ կարգապահութիւնը կամաց—կամաց սկսեց փոխուել և աւելի մարդասիրական դառնալ, Բայց, չը նայելով որ յայտնուեցան և այնպիսի մանկավարժներ, որոնք իրանց դարից առաջ էին ծնուել, որպիսիք են՝ Յովհան Զերսոն, Վիտտորինո դը-Ֆելարե Լինէաս Սիլվիոս Պիկոլոմինի, այնու ամենայնիւ Միջին դարերը յաւիտեանս կը մնան իբրեւ գանակոծութեան և առհասարակ կոպիտ մարմնական պատիժների ոսկեդար:

Միջին դարերի կոպտութեան ու տգիտութեան խաւարի մէջ քիչ թէ շատ ուրախալի տպաւորութիւն է գործում ասպետական դաստիարակութիւնը, Ազատ կղերական սքոլաստիքական տարրի ազդեցութիւնից, ասպետական դպրոցները, համեմատած սքոլաստիքական դպրոցների հետ, կրում էին աւելի մարդասէր և ազատ բնաւորութիւն, Խոհեմութեան սկզբունքն առաջին անգամ այստեղ ընդունուեցաւ, ապագայ կատարելագործութիւն խոստանալով ամբողջ դաստիարակչական գործին, Բայց գանակոծութիւնն ասպետական դաստիարակչութեան մէջ ևս անհրաժեշտ դաստիարակիչ միջոցներից մէկն էր համարուում, Ապագայ ասպետը 14 տարեկան հասակում միայն, ստանալով զինակրի կոչումն՝ ազատուում էր գանակոծութիւնից, Գեր

մանկայում այդ ծխակատարութեան ժամանակ նա ստանում էր և մի ապտակ՝ ի նշան այն բանի, որ այդ օրուանից սկսած նա ազատուում է մարմնական պատիժներից: Մինչև 14 տարեկան հասակն, երբեմն նոյն իսկ 14 տարին լրանալուց յետոյ էլ, ապագայ ասպետներին դանակոծում էին նոյնպիսի ճշգուծեամբ, ինչպէս սրբօրաստիքական դպրոցներում: Ահա թէ ինչ է պատմում իւր դաստիարակութեան մասին Սիլիզիայի անուանի ասպետներից մէկը: «Երբ 10 տարեկան դարձայ, հայրս ուղարկեց ինձ Լիգնից Ֆրեդերիկոս III-ի պալատը, որի երիտասարդ որդու հետ պէտք է շարունակէի կրթութիւնս առանձին տնային ուսուցչի մօտ: Մեր praeceptor-ը մեզ խիստ էր պահում: Բայց որովհետեւ մայրս յաճախ ուղարկւում էր ինձ գելլերներ, 2 ես էլ յաճախ փրկանքի միջոցով ազատուում էի ուսուցչիս ձեռքից: Նորա մօտ անցրած բոլոր ժամանակի ընթացքում ես միայն երկու անգամ գանակոծուեցայ . . . 14 տարեկան որ դարձայ, հայրս ուղարկեց ինձ Գոլդբերգ՝ շարունակելու . . . Իմ այստեղ կղած բոլոր ժամանակի ընթացքում մի շիլլինգ էլ չուղարկեցին ինձ, և ես միմիայն հարուածներ էի ստանում իմ դաստիարակ Բարտից, որի պէտք է ասել, շատ էր պատուում ինձ (?) և Տերենտիոսը կարգաւ չը կարողանալու համար ճիպոտով զարկում էր ձեռքերին՝ ասելով. «Միւս անգամ կը սովորես, թէ չէ վարտիկդ կը հանեմ»: Եւ զղովթիւն բերելում աշակերտների հետ համեմատաբար մեղմութեամբ վարուելը բացատրուում է նոցա (աշակերտների) արտօնեալ գրութեամբ, ինչպէս երևում է այդ Հանս ֆոն-Շվէյնի-գենի (այսպէս էր կոչուում այդ ասպետը) նամակներից: Սովորական դպրոցներում կարգապահութիւնը շատ խիստ էր. այնտեղ Բարտի սպառնալիքը միշտ ի կատար էր ածուում և կարգը ամբողջապէս յենուած էր գաւազանի և գանակոծութեան

1. Դոյնանման ծխակատարութիւն լինում էր եւ հայերիս մէջ: Այդ անում էին արհեստաւորները: Երբ աշակերտն աւարտում էր իւր արհեստի ուսումը, նորա համբարները—արհեստակիցները խնջոյք էին կազմում, ուր լինում էր եւ նորաւարտը: Այդ խնջոյքում նորաւարտը ստանում էր «ուստայ» — վարպետ կոչումը, որի միջոցին համբարի գլխաւորը — ուստաբաշին, բոլորի ներկայութեամբ հանդիսաւոր կերպով ապտակում էր նորընծայ ուստային եւ այդ ապտակը կոչուում էր «ուստադ սիլասի»: Հրնայելով որ համբարութիւնն ընկաւ եւ այժմ, շատ սակաւ տեղեր գոյութիւն ունի նա, մոռացուեցան համբարական զանազան ծեսերն ու սովորութիւնները, սակայն մինչեւ այժմ ժողովրդի բերնում գործածական է «ուստադ սիլասի» խօսքը:

Ժ. Թ.

2. Աւստրիական փող:

վերայ, որոնցով երեխաներին վարժեցնում էին ուշադրութեան և աշխատասիրութեան:

Վերածնութեան դարում իսկ դպրոցական կարգապահութեան մէջ մի մեծ յառաջադիմական շարժում չէ նկատուում: Այդ ժամանակ ևս տեսնում ենք նոյն գանակոծութիւնը, որ տիրապետում էր նախկին ժամանակների դպրոցներում, այժմ ինչպէս և այն ժամանակ, նա համարուում է մանկավարժական անհրաժեշտ միջոց:

Վերածնութեան դարի յառաջագէտ մանկավարժներից մէկը—Մօնտէյնը՝ տալիս է այն ժամանակուայ դպրոցական բարքերի թէև բաւականին չափազանցացրած, բայց պայծառ բնաւորագրութիւնը: Մօնտէյնը իւր կրթութիւնն ստացել է Գլին-նեան դպրոցում (collège), որն օրինակելի էր համարուում: Եօթը տարի ապրելով այնտեղ, նա դուրս բերեց կատարեալ զգուանք դէպի մարմնական պատիժները և դէպի իւր ժամանակի դպրոցական վայրագ կալմակերպութիւնը: Իւր դպրոցական տպաւորութիւններն արտայայտուում է հետեւեալ տողերով, որոնք լի են մաղձոտ դայրոյթով. «Փոխանակ խոհեմ և հեզ միջոցներով տրամադրելու երեխաներին դէպի պարագմունքը, մեր իմաստակներն իսկապէս ոչինչ չեն տալիս աշակերտներին, բացի գանակոծութիւնն ու քանոնի հարուածները, սարսափն ու խստութիւնը, Հեռո՛ւ կորցրէք այդ բռնութիւնը, Հեռո՛ւ այդ ըստիպմունքը, որից աւելի յիմար և ապականող—ես անկեղծ սրտով հաւատում եմ—ոչ մի բան չըկայ. . . Մեր դպրոցների մեծամասնութեան վայրագ կալմակերպութիւնը շարունակ գրգռում է բարկութիւնս . . . Դոքա իրանց մէջ փակուած երիտասարդութեան իսկական քաւարաններն են . . . Փորձեցէք դասի ժամանակ ներս մտցնել և դուք ուրիշ ինչ էէք լսիլ, բացի գանակոծուող մանուկների աղաղակներից», որ միախառնուելով իրանց կատաղութեամբ արած «դաստիարակների» խլացնող աղաղակների հետ՝ լրացնում են համերգը, Դէմքի կատաղի արտայայտութիւն, ձեռքին ճիպոտներ. —ահա՛ քնքոյշ և երկչոտ երեխաներին գիրքը սիրել տալու սիրալի միջոցը:

Ո՛րքան ուրախալի կը լինէր տեսնել դասարանները լցուած կանաչ տերեւներով և գեղեցիկ ծաղիկներով, փոխանակ ուռենու և թխտենու արիւնոտ ճիպոտների, Եթէ ինձ մնար, ես կը զարգարէի դպրոցները Ուրախութեան, Տնծութեան, Ֆլորայի և Հնորհաց պատկերներով . . . որպէս զի նոքա (աշակերտները) բաւականութիւն ստանային այնտեղ, ուր նոցա օգուտն է, Ահա թէ որպիսի

գծերով է պատկերանում XIV-րդ դարի դպրոցական կարգապահութիւնը: Նա իւր դաժանութեամբ յետ չէ մնում սքոլաստիքական կազմակերպութեան հռչակաւոր խտուածիւնից: Ըստ երևոյթին ժամանակի ոգուն հակասող մի այդպիսի երևոյթը բացատրուում է նորանով, որ Աւերածնութեան դարումն էլ մարդասիրական գաղափարները դեռ սակաւ էին մուտք գործում իրական կեանքի մէջ: դաստիարակչութեան գործնականը իւր նախկին գրութիւնից շատ հեռու չէր առաջացել: Տեսականը՝ անկասկած, մի մեծ և համարձակ քայլ էր արել դէպի առաջ, բայց գործնականը, չը նախելով դէպի կատարելագործութիւնն եղած մի քանի քիչ թէ շատ յաջող փորձերին, դեռ ևս դանդաղ քաշ էր գալիս հնացած ծանապարհով:

Բարենորոգութիւնը, որ այն ժամանակուայ ամբողջ կեանքի վերայ մեծ ազդեցութիւն ունեցաւ, բերեց իւր հետ մարմնական պատիժների գէժ եւ աւանդուն բողոք: Լուծելը վառուած էր կրթական գործը բանաւոր հիմքերի վերայ դնելու և լուսաւորութեան բարիքը ոչ միայն բարձր դասակարգի, այլ և հասարակ ժողովրդի մէջ տարածելու բուն ցանկութեամբ: Նա համարեա թէ մերժում էր մարմնական պատիժները: Բայց մի կողմից այն, որ փորձով ապացուցուեցաւ՝ թէ կրթական գործն անկարելի է բնական հիմունքների վերայ դնել բաւականաչափ պատրաստուած ուսուցիչների պակասութեան պատճառով, իսկ միւս կողմից՝ Նրեանամեայ պատերազմը և ուրիշ անցքեր, որոնք ապականեցուցին կերպով ազդեցին այն ժամանակուայ կեանքի վերայ, ճնշեցին այն շարժումները, որոնց նախաձեռն հանդիսացաւ Լուծելը: Այս պատճառով բողոքական դպրոցներն իրականապէս կրում էին նոյն բնաւորութիւնն, ինչ որ կաթոլիկական դպրոցները: Նոցանում ամենալաւ յուղղութիւն բերող միջոցներ համարուում էին՝ գանակոծութիւնը, ծեծը, հայհոյանքը, մարմնական պակասութիւնները ծաղրելու այլ այդօրինակ բաներ: Բազելի ուսուցիչների մասին գանգատուում էին՝ թէ նոքա աշակերտներին ուրիշ կերպ չեն կանչում, բայց եթէ հայհոյական և վիրաւորիչ մականուններով, և թէ՛ չը նայելով որ այն ժամանակուայ կանոնադրութեան մէջ ուսուցիչներին արգելուում էր ուրիշ միջոց գործադրել, բացի մարմնի որոշ մասերը գանակոծելն: այնուամենայնիւ նոքա դիմում էին ապտակի կամ սաստիկ հարուածների, և մազերն ու ականջները ձգելուն: Նրեխաներին աւելի խիստ և ստորացնող տանջանքների էին ենթարկում օրթոգոքս—բողոքական ժողովրդական դպրոցներում:

որովհետեւ նոցա կէտ—նպատակին էր գործնականապէս ապացուցանել երիտասարդութեանը՝ թէ երկիրն իսկապէս էւրոպայէն է, և զարթեցնել նոցա մէջ այն գիտակցութիւնը՝ թէ, գոյութիւնն անմխիթարական մի բան է և ոչինչ այն, որ երկրային է: Բայց գանակոծութիւնը մի առանձին ընդարձակ ազդեցութիւն ստացաւ XVI և XVII դարերում, երբ հիմնուեցաւ եզրփոխների միաբանութիւնը:

Եզրփոխների երեան գալու միջոցին (ԺԶ դարերի վերջերում), ժամանակակից ոգին այնպիսի էր, որ գանակոծութիւնն աւելի քան համապատասխան էր նորան. այդ պատճառով նա արագ կերպով տրտնոծութիւն ձեռք բերեց այն ամէն տեղերում, ուր հնարաւոր էր: Գանակոծութիւնն ապաստանարան գտաւ ոչ միայն դպրոցներում, այլ և եկեղեցական ապաշխարական կարգապահութեան մէջ, հարուստ բուրժուաների ընդունարաններում և մինչև անգամ արիստոկրատ դասակարգի սպաններում: Զէին խորշում նորանից նաեւ պալատական շրջաններում: Օրինակ, Լուդովիկոս ԺԳ պաշտոնապէս իրաւունք է տալիս դուքս Montausier-ին՝ իւր որդուն ծնելու: Իսկ Հենրիկոս IV-ը իւր որդի Լուդովիկոս XIII-ի դաստիարակին գրում է. «Ես գժգոհ եմ այն բանից, որ դուք ինձ տեղեկութիւն չէք տալիս թէ՛ արդեօք ծնծում էք որդուս, թէ ոչ. եթէ ոչ, ևս ցանկանում եմ և պահանջում, որ ամէն անգամ երբ նա իւր յամառութեան կամ մի ի այլ յանցանքի համար արժանի կը լինի ծեծել՝ ծեծել. որովհետեւ ևս շատ լաւ գիտեմ, որ աշխարհում, ոչ մի միջոց աւելի յարմար չէ, քան այդ: Անձնական փորձի դասերից գիտեմ այդ, որովհետեւ նորա հասակին եղածս միջոցին խիստ ծեծ էի ուտում»: (Նամակ առ M.-me Moutglat, 1607 թ. 14-ն նոյեմբ.):

Եզրփոխների բարոյականն աւելի պարզ պատկերացնելու համար մեզ թոյլ կը տանք մի փոքր շեղուել մեր բուն խնդրից:

Եզրփոխականութեան արմատական կանոններից մէկը, որ նոցա ամբողջ դաստիարակչութեան հիմքը պէտք է կազմէր, էր ինքնակամ կերպով տանջանքի ենթարկուելը: «Արի մարդիկ լինելու համար»—ուսուցանում էր Լոյոլան—«պէտք է մարդ, որքան կարելի է, խիստ տանջանքի ենթարկէ իւր մարմնի անդամները, որովհետեւ հէնց դորանում է խորհուրդը: Եզրփոխները, հետեւելով իրանց վարդապետի խրատներին՝ մանաւանդ այդ կարգի գոյութեանս կրքներում՝ առաջարկում էին իրանց հօտին՝ կատարել «հոգեւոր վարժութիւններ», և մասնաւորապէս խորհուրդ էին տալիս աւելի յաճախ և աւելի

խիստ գանակոծել իրանց, համարելով այդ որպէս ամենալաւ միջոց պատժելու և սանձահարելու մեղաւոր մարմինը, ևաւատ չընծայելով մարդկային թուլութեանը, նորա սիրով յանձն էին առնում իրանց հոգեւոր որդոցը ծեծելու պարտաւորութիւնը և գանակոծում էին նոցա կամ մտրակում մեծ եռանդով, բայց ոչ այնքան խիստ: Այդ ծեծը կոչուում էր *disciplina* (disciplina), որ բաժանուում էր *disciplina sursum* կամ *secundum supra*-ի և *disciplina deorsum* կամ *secundum sub*-ի, նայելով մարմնի վերին մասն է ծեծի ենթարկուում թէ ստորին, Վանանց վերաբերմամբ՝ հայր եղուիտներն անյարմար էին համարում *disciplina sursum*-ի գործադրութիւնը, որովհետեւ նոցա մարմնի վերին մասին տուած հարուածները կարող էին վնասակար ազդեցութիւն ունենալ նոցա առողջութեան վերայ՝ կանացի կազմուածքի թուլութեան պատճառով, եւ կանայք իրանք իսկ մի առանձին հաճոյքով էին ենթարկուում կարգապահութեան երկրորդ տեսակին — *disciplina deorsum*-ին, Այժման ընթերցողները հազիւ թէ հաւատան, որ այդպիսի յիմար կեղծ—բարեպաշտութիւնը, այդպիսի ծայրայեղ անամօթութիւնը կարող էր լինել ընդհանուր և սովորական երևոյթ: Բայց այն ինչ յայտնի է, որ ամենամեծանի և ամենահամեստ տիկիներն, ամենաբարեկեցիք և ամենամոթեցած օրիորդները սիրով հպատակուում էին եղուիտների կարգապահութեանը, նոքա խմբերով էին յաճախում այդ բանին և շտապում անընդհատ արժանանալու այդ կարգապահութեանը: Արպէս զի ցանկացողների այդ բազմութեանը բաւականութիւն տան, եղուիտները հիմնեցին կոնգրեգացիաներ կամ աֆիլիացիաներ, այսինքն ընկերութիւններ ու շրջաններ, որոնց անդամներն ամեն շաբաթ ժողովուում էին, կազմում թափօրներ ու դուրս էին գալիս փողոց ողորմելի ցնցոտիներ հագած, կիսամերկ, բոբիկ և արիւն հանելու չափ գանակոծում իրանց, եղուիտական կարգապահութիւնը մի առանձին հովանաւորութիւն էր վայելում ֆրանսիայում: Վատարինէ Մեղիչին ինքն էր Աւինիօնի կարգապահական ընկերութեան նախագահը և անձամբ ստեպստեպ ծեծի էր ենթարկում իւր պալատական կանանց, նորա որդի Լենրիկ III, պատժական կարգապահութեան ջերմ երկրպագու էր և անդադար կազմում էր հանդիսաւոր թափօրների, որոնց մասնակցում էր անձամբ իւր բոլոր մեծամեծներով ու պալատականներով, և մերկանալով աւելի ան կարելի էր, զարդարուում էր վարդեայ պսակներով, մոմերով ու զինուում ծիպոտներով, ժառանգի ծննդեան մաղթանքների առթիւ Լենրիկը կազմում

էր թափօրների, որոնց՝ բացի ինքն ու իւր մեծամեծները, մասնակցում էին Լուիզա թագուհին և բոլոր պալատական կանայք: Բոլոր մասնակցողները մինչև գոտին մերկանալով շրջում էին Փարիզի փողոցները, հասցնում միմեանց սաստիկ հարուածներ և յարուցանում փողոցային դատարկաշրջիկ ամբոխի չարամիտ ծաղրութեանը: Արպիսի գարշ և զզուելի ծաղր դէպի ճշմարիտ քրիստոնէական ճիշաւորական կեանքի սուրբ զգացմունքը, Ակամայ կասկած է առաջանում այդ երևոյթների իսկութեան մասին, բայց այնուամենայնիւ դոքա իրօք գոյութիւն ունէին: Բարեբաղդաբար այդ թափօրները չուտով գրգռեցին հասարակութեան զայրոյթը և ժՁ-րդ գարի վերջերում արգելուեցաւ այդ նշանաւոր կարգապահութիւնը, թէև ծածուկ շարունակում էր նա իւր գոյութիւնը ժՁ-րդ դարումն էլ, որին ապացոյց է ժիւրաք—Վադիէր: Թափօրը, որը իւր ժամանակին մեծ աղմուկ հանեց,

Այսչափն աւելի քան բաւական է համոզուելու, թէ մարմնական պատիժները կատարելապէս համապատասխան էին եղուիտականութեան ոգուն: Մենք ոչ մի հիմք չունենք կարծելու, թէ եղուիտները խնայում էին գոնէ մանուկ հասակը և նորա վերաբերմամբ մեղմացնում իրանց խիստ կանոնները: Միայն՝ եղուիտներն անյարմար էին համարում ուսուցչի արժանաւորութեանը՝ անձամբ պատժել աշակերտներին և ծեծելու պարտաւորութիւնն աշխարհական անձանց էին յանձնում կատարելու: Բոլոր դպրոցներում գլխաւոր կարգապահին վերաբերեալ գործերը կատարում էին, այսպէս կոչուած, պաշտօնական կարգապահ, ծառաներ և դռնապանը: Բացի այդ անձնաւորութիւնները, նոյն իսկ աշակերտների միջից ընտրուում էր դեկուրիոն կամ պրետոր, որը պարտաւոր էր հսկել դասարանի հանդարտութեանը. իսկ պաշտօնական կարգապահի բացակայութեան ժամանակ՝ կատարել և նորա պարտաւորութիւնները, Շատ հազիւ էր պատահում, որ եղուիտական պատիժը մեղմ լինէր: 2ընայելով որ *Katio studiorum*-ը 1 այդ դէպքում չափաւորութիւն է քարոզում բայց շատ վկայութիւններ կան, որոնք ապացուցանում են թէ՛ պաշտօնական կարգապահի բազուկը շատ հեռու է քնքրել լինելուց, Իրեւ օրինակ կը բերենք Սէն—Սիմօնի

1. Այդ թափօրի եւ առհասարակ եղուիտական կարգապահութեան մասին տես T. Grizunne pa. Езуч- тия, т. 1. кн. III гл. 2.—Ս. հեղ.

2. 1395 թուին հրատարակուած այս գրութեան պարունակում է զպրոցական լիակատար ծրագիրը, որ երեք դար մտաց իբրեւ եղուիտական դաստիարակչութեան անփոփոխ օրինագիրը: Ծ. հեղ.

Հետևեալ վկայութիւնը: «Մարքիզ Բուֆլերի մեծ որդին 14 տարեկան էր: Նա գեղեցիկ էր: Լաւ դաստիարակուած: Հափազանց աշխատասէր» և: առհասարակ, շատ բան էր խոստանում: ապագայում: Դ՛Արժանօնի երկու որդոց Հետ նա գիշերօթիկ աշակերտ էր եղուիտների մօտ: 2ը գիտեմ ի՛նչ բանում մեղանչել էին նոքա: Սուրբ Հայրերը կամեցան ցոյց տալ, որ ոչ ոքից չեն վախենում և վախենալու ցանկութիւն էլ չունին: ու ծեծեցին մանուկին: որովհետեւ ճշմարիտ որ մարքիզ Բուֆլերից վախենալու ոչինչ չունէին: Սակայն նոքա չը մտածեցին նոյն կերպ վարուել և միւս երկու: նորան համահաւասար յանցաւոր մանուկների հետ: որովհետեւ նոքա (Հայրերը) ամենայն օր գործ ունէին դ՛Արժանօնի Հետ: որ ոստիկանատան գլխաւորի օգնականն էր: Գանակոծուած մանուկ Բուֆլերն, ի հետեանս դորա: հոգեկան մի այնպիսի դժբախտութեան մէջ ընկաւ: որ հէնց նոյն օրն ուշաթափուեցաւ և չորս օր կեանքի և մահու մէջ էր տատանուում: . . . Այս բանը զայրոյթի մի ընդհանուր և խիստ աղաղակ բարձրացրեց ընդդէմ՝ եղուիտների: թայց . . . առանց որ և է հետեանքի: Mémoires. հատ. XI, 83):

Պիղծ: Ճիշդ եղուիտական շարժառիթների աղդեցութեան ներքոյ՝ եղուիտական կարգապահութիւնըն ահա այդ աստիճանի խստութեան հասնելու ընդունակ էր: Վստատման արդարացնում է միջոցը: յայտնի սկզբունքը: որ եղուիտներին թոյլ էր տալիս շատ բաներ: որոնք վայել չէին քրիստոնէին և մարդուն: չէր կարող չը խրախուսել ad maiorem gloriam Dei գանակոծութեան գործադրութիւնը՝ յօգուտ և իշահ՝ «Երեսուսեան կարգի» արժանաւոր եղբայրակիցների: Այդ պատճառով եղուիտական դրպրոցներում գանակոծութիւնը դաստիարակչական անհրաժեշտ միջոցներից մէկն էր: որին ապացոյց է առանձին կարգապահի և նորա մի քանի օգնականների գոյութիւնը: Պարզ է: որ եղուիտները պատիժը դասել էին որոշ սրբութեանց կարգը և այդ պատժի շատ մասնաւոր օրինակները: կարող է պատահել: որ չեն հասել մինչև մեր ժամանակները: որովհետեւ եղուիտները սովորութիւն ունէին շատ բան գաղտնի պահել հասարակ մահկանացուներից: Յամենայն դէպս: կասկած չը կայ: որ եղուիտների՝ երիտասարդութիւնը դաստիարակելու գործին տիրապետելու ժամանակը՝ էր և գանակոծութեան տիրապետութեան ժամանակ:

Այն միջոցին: երբ գանակոծութիւնը կատարի կերպով գործադրուում էր եղուիտական դպրոցներում: եղուիտական կարգի աղգեցութեանը նուազ

ենթակայ երկրում գանակոծութեան վերայ կարգացուեցաւ վճռական մեղադրական դատակնիք: Այդ դատակնիքը կարգաց անգլիացի նշանաւոր փիլիսոփայ և հռչակաւոր մանկավարժ Լօկկը: Նորա լիսովայ և հռչակաւոր մանկավարժ Լօկկը: «նորհրդաճութիւնը յաղագս դաստիարակութեան» գրքի այն գլուխները: որոնք խօսում են ընդհանրապէս պատիժների և մասնաւորապէս մարմնական պատիժների մասին: իրաւամբ ամենալաւն են համարուում նորա քննադատութեանց մէջ: Ռօյլէնը և Ռուսսօն քիչ չօգտուեցան նոցանից: Սակայն ինքը: Լօկկը ևս այդ բանում հետեւում է Մօնտէյնի: «Essais»-ի հեղինակի մանկավարժական հիմնական կանոնը—«խիստ մեղմութիւն» էր և «խորհրդաճութիւնը»-ի հեղինակի կանոնը: Այդ երկու իմաստասէրների հայեացքների նոյնութիւնը երևում է և այն բանից: որ Լօկկը վճռում է վերջնականապէս դատապարտել գանակոծութիւնը: որով նա կատարում է Մօնտէյնի ամենասիրելի ցանկութիւններից մէկը: «գանակոծութիւնն: ասում է նա» ստրկական միջոց է: որ կրթում: դաստիարակում է ստրկական բարք: Սակայն զիջանելով ժամանակակից պահանջներին: չը նայելով գանակոծութիւնն անպայման կերպով արգելելուն: ճշմարիտ է: մի դէպքում միայն նա թոյլ է տալիս բացառութիւն: այն է՝ երբ երեխան չափազանց յամու և անհնազանդ է: Բայց: անկասկած: այդ էլ շատ է նորա ժամանակի համար: Որպէս զի անաշուութեամբ գնահատենք Լօկկի հայեացքի բոլոր համարձակութիւնը: պէտք է ի նկատի ունենալ՝ թէ ո՞ր աստիճանի տարածուած էր այն ժամանակ գանակոծելու սովորութիւնը: որ դեռ մինչ այժմս էլ Անգլիայում ուսումնական հիմնարկութեանց տնօրէններն ստիպուած են լրագրերի մէջ առանձին յայտարարութիւններով յայտնել ի գիտութիւն հասարակութեան՝ թէ մարմնական պատիժների արգելումն իրանց դպրոցների առաւելութիւններից մէկն է համարուում: Դժուար է հաւատալ այն բանին: որ անգլիական ուսուցիչներն անգրգուշի կերպով հետեւում են գանակոծութեան միջոցով յուղղութիւն բերելու հին: ստորացուցիչ սովորութեանը: Անգլիայում գանակոծութիւնն այնպէս էր արմատացել: որ պատահում էին դէպքեր: երբ իրանք: աշակերտներն էին պաշտպան կանգնում գանակոծութեան: իբրեւ արտասովոր մի բարիքի: «1818 թուականին» պատմում է Շարտէհհաուզի առաջին աշակերտներից մէկը: «մեր գլխաւոր դաստիարակ զօքստոր Ռօսսէլը: որ միշտ իւր ինքնուրոյն համոզմունքներն ունէր: վճռեց վերացնել մարմնական պատիժները՝ փոխարինելով նոցա դրամական տու-

գանձութիւն Բուրսոս ոտքի կանգնեցինք նորամուծութեան դէմ: Մեզ թուում էր, թէ գանակոծութիւնը կատարելապէս վայել է ջննտմանի պատուին: Իսկ տուգանքը—ով նախատինք, Ամբողջ դպրոցը սկսեց գոռալ, «Տե՛ս՜ տուգանքը, կեցցէ՛ գանակոծութիւնը»: Խռովութիւնը յաղթանակեց և գանակոծութիւնը հանդիսաւոր կերպով վերականգնեցաւ: Անպատմելի ուրախութեան մէջ էինք մենք մեր յաղթութեան առթիւ: Տուգանքը վերացնելու յաջողօր օրը երբ մտանք դասարան, գտանք ձիպոտների մի ահագին խումբ և ամբողջ երկու ժամ նուիրեցինք նոցա գործադրութեանը: Բերուած օրինակը խիստ բնորոշ է: Դիշնցնելով եղբիտական նշանաւոր կարգապահութիւնը, նա ծառայում է իրրեւ աներկ-բայելի վկայութիւն այն բանին, որ նոյն իսկ ներկայ դարիս սկզբում՝ գանակոծութեան հեղինակութիւնն Անգլիայում այնքան բարձր էր որ նորա վերջնականապէս արտաքսման մասին մտածելն իսկ անկարելի էր: Այդ պատճառով Լօկկի յառաջագիմական հայեացքները հազիւ թէ բարբեր—վերանորոգող ազդեցութիւն ունենային այն ժամանակուայ դպրոցական կարգապահութեան վերայ, և նորա լուսաւոր ու մարդաշահ գաղափարները միայն համարձակ նախաձեռնութեան նշանակութիւն ունեցան դպրոցական կարգապահութեան բարենորոգման մէջ: Նախաձեռնութիւն, որ ներշնչուած էր նորա նախորդներով այդ ասպարեզում— Անտէլմով և Մօնտէյնով: Բայց որ մի անգամ՝ յայտնուեցաւ այդ նախաձեռնութիւնն, առաջւոր մարդիկ չէին կարող չը խոստովանել նորա, այդ նախաձեռնութեան նախորդած բարենորոգումների գերադանցութիւնը և չէին կարող չօժանդակել նորան իրանց մասնակցութեամբ: Լօկկը պէտք է ունենար հետեւողներ և ունեցաւ: Նոցանից ամենահաշակաւորն էր Ռօլլէնը:

Իւր «քննադատութիւնը յաղաքս գիտութեանց» գրքի մէջ Փարիզի նշանաւոր ուսուցչապետը համարեաւ կրկնում է մարմնական պատիժների մասին Լօկկի տուած դատողութիւնները: Ռօլլէնը ևս, ինչպէս Լօկկը, կարգապահութեան գործում հակուում է դէպի մեղմութիւնը: Սակայն նա չէ՛ մտահանում վճռական կերպով խօսել գանակոծութեան դէմ: Այն, որ իսկապէս ստիպում է նորան տատանուիլ, այն, որ շուարեցնում է և խռնընդոտն լինում նորան արտայայտելու կարծիքը, որ նորա սրտի ամենածառուկ ցանկութիւնն է և որ, սակայն, երբեք չը հասաւ նորա լեզուին, այդ Սուրբ Գրքի մէջ եղած մի քանի տուն գրուածքն է, որին կարելի է տալ

այնպիսի բացատրութիւն, որը նպաստաւոր է գանակոծութեան գործադրութեանը, Հետաքրքրական է նկատել, թէ ի՞նչպէս ջերմեռանդ քրիստոնէի զբաղմանց և մանկավարժի կարեկցութեանց միջև եղած իւր տատանմանց մէջ բարի բայց անվճռական Ռօլլէնն աշխատում է գտնել սրբալիք բնագրի համար ամենից սակաւ խտակրօնական նշանակութիւն, և համոզել իրան, որ Ս. Գիրքն իսկապէս այն չէ՛ ասում, ինչ որ իրան թուում է: Երկար տատանուելուց յետոյ վերջապէս այն եղբակացութեանն է դալիս, որ մարմնական պատիժները թոյլատրելի են, բայց պէտք է գործադրուին միմիայն ծայրայեղ և բացառիկ դէպքերում: այսինքն—իսկապէս այն հայեացքն է արտայայտում, ինչ որ արդէն արտայայտել էր Լօկկը:

Գանակոծութիւնն իրրեւ յուզողութիւն բերող միջոց գործադրելուն դէմ եղած այսպիսի կշիռ ունեցող հակաճառութիւններից յետոյ, որպիսիք են Լօկկի և Ռօլլէնի դատողութիւնները, բնական էր սպասել, որ մանկավարժական կարգապահութեան մէջ գանակոծութիւնը կորցնէր իւր նշանակութեան նշանաւոր մասը: Բայց իրօք՝ վիճակուած էր, որ այդ կատարեալ բնական ակնկալութիւնը երկար ժամանակ չիրականանար: շատ տարիներ անցան, մինչև որ մարդիկ, ինչպէս Պեստալոցցին էր, արտաքսեցին գանակոծութիւնը դպրոցական քրէական օրինադրից, Սակայն Լօկկի և Ռօլլէնի սկզբունքների առաջին ազդեցութեան հետքերը կարելի է նշմարել Լա—Սալլի Ռէյմոն քաղաքում 1684 թուին հիմնած «եղբարք քրիստոնէական դպրոցների» կոչուած ընկերութեան մանկավարժութեան սիստեմի մէջ: Հիմնուած մի մարդու ձեռքով, որին կենսագրերը համարեալ թէ սրբացրին, քրիստոնէական դպրոցների եղբարք հասարակութիւնը իւր ուղղութեան, կազմակերպութեան և գործունեութեան մէջ արտախայլեցնում էր իւր հիմնադրի բնաւորութեան մալգասէր գծերը: Ինչ վերաբերում է մարմնական պատիժներին, պէտք է ասել, որ երկու դարի ընթացքում «եղբայրներն» էին միայն, որ հոգս էին տանում բարուգրելու յուզողութիւն բերելու սիստեմը: Սակայն անաչառութիւնը պահանջում է նկատել, որ եղբայրների սիստեմն էլ թերութիւնից զերծ չէր: Նա ոչ սակաւ անգամ ոտնակոխ էր անում մանկական հոգոյ լաւագոյն շարժումները և, անկասկած, հեռու էր ժամանակակից իդէալից: Վերջին ժամանակները նա ևս ենթարկուեցաւ նոր մանկավարժութեան մարդասիրութիւն ներշնչող ազդեցութեանը: Մեր դպրոցներում միմիայն ստիպողական հարկն է մեզ գրգում գիմնելու մարմնական պա-

տիժներին», ասում էր 1870 թուին եղբայր Փիլիպպոսը, Արդէն 1811 թուին, մարմնական պատիժներին՝ եթէ ոչ իսպառ վերացնելու, գոնէ նորա սիստեմի մէջ արմատական փոփոխութիւններ անելու վերաբերմամբ հարց բարձրացաւ։ Այդ ժամանակ կատարելագործուած էին և պատժական գործիքները, «Փոխանակ ծանր քանոնի, որի անյարմար լինելուն համոզեց մեզ երկարատե փորձը»—կարդում ենք ընկերութեան կանոնադրութեան մէջ—«մենք ներմուծում ենք կաշուի մի հասարակ կտոր, մի ոտնաչափ երկայնութեամբ և մի մատնաչափ լայնութեամբ, մի ծայրը բաժանուած երկու ճիւղի, և մենք յուսով ենք, որ մեր թանկագին ու սիրեցեալ պաշտօնակիցները՝ շնորհիւ Աստուծոյ և իրանց հեղութեան, կը գործադրեն այն միմիայն ստիպողական դէպքերում և նորանով հարուածներ կը տան միմիայն ձեռքերին, թոյլ չտալով իրանց գործադրել այն մի այլ կերպ»։ Այս նորմուծութիւններն արդէն ներկայ դարիս են վերաբերում։ «Կանոնադրութիւն քրիստոնէական դպրոցների» 1 առաջին հրատարակութեան մէջ մարմնական պատիժներն ազատ թողատրուում են դպրոցներում և կարգաւորուած են մանրակրկիտ և հետաքրքիր ճշգրտութեամբ, Լա—Սալլը որոշում է պատիժների հինգ տեսակ.— ա) յանդիմանութիւն, բ) էպիտիմիա, գ) ֆերուլայի (մի առանձին տեսակ քանոն) հարուածներ, զ) գանակոծութիւն և է) դպրոցից արձակելը։ Թէև բացի մարմնական պատիժներն, ուրիշ պատիժների պատմութիւնը մեր խնդրի մէջ չէ մտնում, սակայն եղբայրների սիստեմի մասին մի որոշ գաղափար տալու համար մի քանի խօսք էլ նոցա մասին կասենք։

Լուութիւնը Լա—Սալլի դպրոցական կարգապահութեան հիմնական կանոնն էր, «Պէտք է, որ քան կարելի է, քիչ խօսել, Գորա համար խօսքի միջոցով յուղղութիւն բերելը շատ սակաւ պէտք է գործադրուի։ Մինչև անգամ, աւելացնում է կանոնադրութիւնը, կարծեմ, աւելի լաւ կը լինի՝ բոլորովին չը գործադրել խօսքը»։ Իսկապէս դաստիարակութեան մի տարօրինակ ուղղութիւն է սա, ուր արգելուում է այնպիսի բարեբեր միջոցներ, որպիսիք են յորդոր ու յանդիմանութիւնը և խօսքի միջոցներով երևիսայի մտքի և զգացմունքների վերայ ազդելը։ ուր, հետևապէս, ուսուցչի բարոյական հեղինակութիւնը տեղ չունի և ուր այդ հեղինակութեան փոխարէն հանդէս բերում ստիպուն-

քի և բռնութեան ու քանոնի և գանակոծութեան]]—*ultima ratio*-ը, Լա—Սալլն էպիտիմիա է անուանում մարմնական պատիժների մի որոշ տեսակը։ Օր. աշակերտին կամ չողեցնում էին, կամ պատուիրում անգիր անել մի քանի երեսներ, կամ ստիպում, որ կէս ժամ գիրքը զիմացը պահէ և անընդհատ նայէ վերան և կամ հրամայում էին, որ ձեռքերը ծալած ու գլուխը խոնարհած մնայ անշարժ և այլ նման պատիժների։ Այս բոլորը կոչուում էր դպրոցական էպիտիմիա, Ինչ վերաբերում է յատկապէս մարմնական պատիժներին, ինչպէս տեսանք, աշխատում էին խոյս տալ նոցանից, Այնուամենայնիւ Լա—Սալլը թողել է յուղղութիւն բերելու մանրամասնօրէն կարգաւորուած սիստեմը և պատմական տեսակէտից հետաքրքիր է վերակրկնել այդ մասին եղած մանրամասն որոշումները, որ արել է կարգի հիմնագիրը։

«Կանոնադրութիւնը» նախ առաջարկում է ֆերուլայի «մի գործիք, որ բաղկացած է երկու միմեանց հետ կարուած կաշուէ գօտիներից, 10—12 մատնաչափ երկայնութեամբ՝ կոթն էլ հետը հաշուած, վերջինս պէտք է լինի ձուածն՝ երկու մատնաչափ տրամագծով, նորա մի կողմը փոս ընկած և կլորացրած պէտք է լինի, որ յարմարուի բռնելու»։ Ինչպէս տեսնում ենք, ոչինչ չէ մոռացուած։ Ֆերուլայի ձևն անգամ որոշուում է ամենաճիշդ կերպով։ Ֆերուլայով պատժել սահմանուած էր հետևեալ յանցանքների համար.— ա) դաս չը պատրաստելու և չարութեան համար, բ) դասից ուշանալու և գ) առաջին հրամանը չը կատարելու համար, ճշմարիտ է, Լա—Սալլը պատուիրում է ուսուցչին լինի, որ միշտ միայն ձախ ձեռքով պատժեն, աջ ձեռքը միշտ պէտք է ազատ լինէր, բայց միւս կողմից՝ երեսան, ըստ Լա—Սալլի կանոնների, պատժի ենթարկուելիս չը պէտք է ձայն հանէր, հակառակ դէպքում՝ նա ենթարկուում էր նոր պատժի, Լա—Սալլը իւր կանոնադրութեանց մէջ նոյնպիսի մանրակրկիտ կերպով կարգաւորել է և այն յանցանքները, որոնց համար պատժում էին գանակոծութեամբ, Գանակոծութեան էին դատապարտում աշակերտին հետևեալ դէպքերում.— ա) երբ նա չէր կամենում հնազանդուիլ, բ) երբ նա բոլորովին դաս չէր պատրաստում, գ) երբ նա գրելու փոխարէն խղզում էր իւր տետրակը, զ) երբ նա կռուում էր իւր ընկերի հետ, է) երբ նա եկեղեցում պակաս ջերմեռանդութեամբ էր աղօթում, զ) երբ քրիստոնէական, դասի կամ խոստովանանքի ժամանակ նկատուում էր նորա մէջ պարկեշտութեան պակասութիւն և է) երբ նա խոյս էր ապիս դասարանից, խոստովանելից կամ քրիստոնէական վար-

1. Լա Սալլի այս հեղինակութիւնը խօսում է դպրոցական պարապմունքների, կարգապահութեան, ուսուցչների որպիսութեան և ուրիշ դոյնանման քանոնի մասին։

դասկետութեան դասերին յաճախելուց, Որպէս զի հասկանալը թէ՛ որ աստիճանի արհամարհում է Լա—Սալլը մանկական բնութեան արժանիքը՝ համարելով այն (բնութիւնը) մի մեքենայ և մոռնալով է մանկական զգացմունքների քննութիւնը, պէտք է մինչև վերջը կարգաւոր այդ կանոնադրութեան տարօրինակ որոշումները, Այն նախազգուշութիւնները, որ պահանջում է Լա—Սալլը, աւելի ևս ակնյայտի են դարձնում մարմնական պատիժների անկատարութիւնները, «Երբ ուսուցիչը պէտք է պատժէ աշակերտին դանակոծութեամբ, թող դասարանի ուղադրութիւնը հրաւիրող նշանը տայ, ապա նշանացի ցոյց տայ այն կանոնը, որ աշակերտը խախտել է և այն ժամանակ հրամայէ նորան գնալ այնտեղ, ուր սովորաբար տրուում է պատիժը, Աշակերտն իսկոյն պէտք է գնայ այնտեղ և պատրաստուի պատիժն ընդունելու և աշխատէ միևնոյն ժամանակ իւր ընկերներին անհամեստ չերեկի, Այդ սովորութիւնը, որ աշակերտն ինքը պէտք է պատրաստուի պատիժն ընդունելու՝ առանց հարկադրելու, որ ուսուցիչը իւր ձեռքով անէ այդ պէտք է շատ խիստ պահանջուի...» «Այն միջոցին, երբ աշակերտը պատրաստուում է պատիժն ընդունելու, ուսուցիչը պէտք է զարթեցնէ իւր մէջ անկեղծ պատրաստակամութիւն՝ պատիժը սիրով տալու համարելով թէ Աստուծոյ Սուրբ աշաց առաջ է կատարում այդ, Ապա նա հանգիստաւոր և վայելուչ կերպով ցած պէտք է իջնէ իւր ամբիոնից, Երբ կը հասնէ այնտեղ, ուր դնուում է յանգաւոր աշակերտը (կարգի կանոնադրութեան համաձայն՝ դանակոծութեան տեղը պէտք է լինէր դպրոցի ամենամութ և հեռաւոր անկիւններից մէկում, որպէս զի զոհի մերկութիւնը չերևար), թող ասէ նորան մի քանի խօսք, որպէս զի պատրաստ է նորան ընդունելու պատիժը խոնարհութեամբ, հեղուցեամբ և յուզողութիւն գալու հաստատ մտադրութեամբ, և ապա խիտ նորան սովորական երեք հարուածը, հինգ հարուածից անցնել կարելի է, երբ այդ մասին կըստանայ վերատեսչի յատուկ թոյլտուութիւնը... Իսկ եթէ աշակերտը դեռ պատրաստ չէ, ուսուցիչը կրկին, առանց մի խօսք ասելու, թող յետ գառնայ իւր ամբիոնը և երբ կը վերադառնայ, թող տայ նորան ամենախիստ պատիժը՝ որը կարելի է առանց վերատեսչի յատուկ թոյլտուութեան, այսինքն հինգ հարուածը, Եւ այսպէս, երբ ուսուցիչը հարկադրուած է ստիպել աշակերտին ընդունելու պատիժը վարդապետութեան նա պէտք է մի փոքր յետոյ (պատժից յետոյ) փորձէ մի կերպ բացատրել աշակերտին իւր յանցանքը, թողնէ որ մի

քիչ հանգստանայ և ապա խտտութեամբ և անկեղծութեամբ յորդորէ նորան զգոյշ լինել և միւս անգամ չգործել նոյն յանցանքը»:

Պէտք է նկատել, որ այնքան էլ յաջող չէ ընտրած այն բոլոր, երբ քարոզ պէտք է կարգաւոր և ուրեմն, խանգարել այն կանոնը, որով արգելուում է եղբայրներին որ և է բանաւոր յորդորանք:

«Պատժուելուց յետոյ՝ աշակերտը ձեռքերը խաչած և հեղուցեամբ սենեակի մէջ տեղում, ուսուցչի առաջ ծուկ պէտք է չօգէ և շնորհակալութիւն յայտնի է նորան իւր պատժուելու համար՝ ապա դառնայ դէպի խաչելութիւնը՝ Աստուծուց՝ ևս նոյն բանի համար շնորհակալ լինէ և խոստանայ՝ նորան, որ այլ ևս չի գործիլ այն յանցանքը, որի համար քիչ առաջ պատժուեցաւ, Այս բոլորն առում է նա առանց մի բառ անգամ արտասանելու, դորանից յետոյ ուսուցիչը նշան է տալիս, որ տեղը նստէ»:

Այս որոշումները ծանր տպաւորութիւն են թողնում լուսաւորուած և կրօնասէր մարդու վերայ, Վարելի՛ է արդեօք դորանից էլ աւելի կեղծ գաղափար ունենալ մարդկային բնաւորութեան մասին, դորանից էլ աւելի նրբութեամբ ծաղրել երեխայի ամենաօրինաւոր զգացմունքները և ամենազղուելի կերպով միացնել անհամեստ և անվայել սովորութիւնը կրօնական զգացմունքների արտայայտութեան հետ, Դա վերին աստիճանի անմտութիւն է, ասում է Վանտը, որ մենք ստիպում ենք մեր պատժած երեխային՝ մեզանից շնորհակալ լինել, համբուրել մեր ձեռքերը և այլն, Դա նշանակում է նոցա ստրուկ արարածներ դարձնելուն ձգտել:

Ապա Լա—Սալլը կարծես թէ մեղմացնում է նախընթաց կանոնի խտտութիւնը:

«Ի սէր Աստուծոյ, ձեռքերին հարուածներ չը տաք»—խորհուրդ է տալիս նա—«որքան կարելի է, աշխատեցէք երբէք չը ծեծել երեխաներին»:

Այս խորհուրդը պարզուում և լրանում է հետեւեալ խօսքերով, «Այ մի պատիժ չը պէտք է գործադրուէր, բացի նոցանից, որոնք գործադրուում են դպրոցներում և այսպէս, երբէք չը պէտք է ծեծել երեխաների ձեռքերին ու ոտքերին»:

Ուրիշ խօսքով, յուզողութիւն բերելու համար ուսուցիչը պէտք է գործադրէ միմիայն կանոնադրութեամբ ընդունուած յայտնի գործիքները և պատժէ միայն համաձայն նոյն պատիժները կանոնաւորող պաշտօնական օրէնքների:

Լա—Սալլի դպրոցական կարգապահութեան էութիւնն այդ է, Ինչպէս տեսանք, նա (կարգապահութիւնը) չէ տաճում դէպի իւր սաները մի ա-

անձին քնքշութիւն, խիստ լուրջութեան և ուսուցիչների շատ դէպքում ազատ նախաձեռնութեան սկզբունքների վերայ հիմնուած լինելով, կրթելով իւր սաներին գրեթէ բացառապէս գանակոծութեամբ և ֆերուլայով, այդ կարգապահութիւնն ա՛կարող էր չը դառնալ լայն ասպարէզ ուսուցիչների և դաստիարակների կամայականութեան և աշակերտների բնաւորութեան բարոյապէս աղաւաղելուն: Բայց այնուամենայնիւ մենք չը պէտք է մի առանձին խտուրտեամբ վերաբերուենք Լա—Սալլի պատժական կանոններին: Զը պէտք է մոռնանք, որ նորա առաջարկուած էին այն ժամանակ, երբ դեռ թարմ էր եղութական հռչակաւոր կարգապահութեան յիշատակը իսկ Լօկլը գեռ նոր էր յայտնել իւր մարգասէր հայեացքը մարմնական պատիժների վերաբերմամբ: Բացի այդ, անկարելի է չը համաձայնել, որ «եղբայրների» կանոնագրութիւնը մարմնական պատիժների կատարելագործելու և խտուրտեան մեղմացնելու վերաբերմամբ ներկայացնում է յառաջդիմութեան մի յայտնի քայլ: Այսպէս, օրինակ, առանց վերատեսչի թողլտուութեան հինգ հարուածից աւելի չը խփելու կանոնը, յանցաւորին (թէ և սակաւ դէպքերում) յորդորելու և այլ մի քանի կանոններ երեւան են հանում կարգապահութեան մէջ մարգասիրութեան զարգանալու գործում՝ այն ժամանակուայ վերաբերմամբ՝ մի նշանաւոր յառաջդիմական շարժում: Այդ նկատմամբ դպրոցական կարգապահութեան բարենորոգման գործում Լա—Սալլին կարելի է մի որոշ աստիճանի նորութիւն մտցնող համարել, և ինչ էլ որ լինի, իսկապէս նորա նախաձեռնութեանն ենք պարտական Լօկլի և Ռոյլէի սկզբունքների առաջին անգամ գործնականապէս թէ և անգիտակցաբար և ոչ բուրոզմին անթերի բրականացումը:

Մանկավարժութեան պատմութեան շարունակութեան մէջ գանակոծութիւնը չունեցաւ այլ ևս քիչ թէ շատ լուրջ պաշտպաններ: Ռուսոյի նշանաւոր տեսութիւնը, որ դաստիարակչութեան ոգու և ընդհանուր ուղղութեան մէջ արմատական բարենորոգութիւն առաջ բերաւ, անկարելի դարձրեց մարմնական պատիժների մասին եղած այն խոտակրօնական հայեացքների կրկնութիւնը, որոնք տիրապետում էին մինչև «Էմիլ»-ի հեղինակի յայտնութիւնը: Ռուսոյից յետոյ՝ նոյն ուղղութեամբ (բարուգրել դաստիարակչական գործը և մասնաւորապէս՝ մանկավարժական կարգապահութիւնը) գործում էին նորա բազմաթիւ հետեւողները և մանաւանդ հռչակաւոր Պետտալոցցին: Ի հարկէ, գործնականն ինչպէս ամէն տեղ, նոյնպէս և այստեղ անջատուում է

տեսական: և «հայրական յորդորանքը» գանակոծութեան միջոցով՝ երկար ժամանակ շարունակում է պատուաւոր տեղ բռնել բոլոր երկիրների դպրոցական կարգապահութեան մէջ: Իսկ Անգլիայում, ինչպէս տեսանք, ներկայումս էլ տեղ ունի: Այդ բանում Ռուսոստանը բացառութիւն չը կազմեց և գանակոծութիւնն այնպիսի սովորական երեւոյթ էր, որ անկարելի էր երեւակայել մի դպրոց՝ առանց նորան Յիշեցէք թէ ի՛նչ է ասում Դոստոյեւսկու Պոլիա Կրասոտկինը.³ по идее мальчика, школьника пороть и должны пороть: что, дескать, за школьникъ, если его не порютъ? * Բայց ոչ միայն դիւզաղիք, այլ և բարձր գասակարգի մարդիկ էլ նոյն հայեացքներն ունէին և, ինչպէս ասում է Վալլօմէյցը, պատրաստ էին «платить за книгу и переверну». Նոյնիսկ ներկայումս էլ, երբ կոպիտ մարմնական պատիժները գանակոծութեան հետ միասին արտաքսուած են թէ բարձր և թէ ստորին դպրոցներից, դեռ ևս կան մարդիկ, որոնք համոզուած են՝ թէ «ճիպոտը» բուժիչ զօրութիւն ունի: Բայց՝ *vetustas cessit, ratio vicit*; այժմ այլևս անկարելի է վերադառնալ դէպի հին, բայց ոչ բարի ժամանակների կարգապահութեան յիշատակը: յուսով ենք, որ մարդկային արժանաւորութեան մասին եղած մեր ժամանակի վերին աստիճանի զարգացած գիտակցութիւնը վերջնականապէս արտաքսել է գործնական մանկավարժութիւնից այն կոպիտ, բարբարոսական պատիժները, որոնք ստորացնում են այդ նոյն արժանաւորութիւնը և որոնք չունին այժմ ոչինչ առնչութիւն նորա՝ հետ: Այդ պատճառով՝ բոլորովին անպատեհ է, չասենք հակամարդասիրական, գործադրել այդ պատիժները նոցա՝ վերաբերմամբ, որոնք մարդկային արժանաւորութեան մասին բարձր գաղափար են դուրս բերում դպրոցից:

Խ. Տ. Կ.



Տ Ղ Ա Յ Դ Ա Ն Թ Ի

Ե Ի

Ա. Գ. Զ. Ի. Խ. Ա. Ն. Գ. Ռ. Թ. Ի

Հ. Է. Բ. Ի. Ա. Թ. Ը.

(Շարունակուի ինչ ևս վերջ):

Ժ. Բ.

Գնաց մեր նստաւ թաքեւորութիւն արաւ, Դաւթին թարիֆ գովք ըմէնու ականջ հասաւ, Խաբարն հասաւ Գիլիսէ խանդութ խանութին, Գի մէ էսէնց թաքեւոր էսէնց զօրա էսէնց գօչաղ—